իր Ազգին հարազատ և արդիւնաւոր անդամ դառնալ չէ կարող, մանաւանդ թէ՝ կջանայ այլոց ևս առաջնորդ լինել և իր կրթօղին գաղափարները ևլն. տարածել։

Արդ հեշտ է իմանալ օրինակի աղագաւ յիշելով և կշռելով թէ՝ ինչպէս որ Գերմանացին, Ամերիկացին ևլն. պարտաւոր չէ իւր դպրոցին մէջ Հայոց օգուտը պաշտպանել և Հայոց հարազատ ազգութեամբ գիտութիւն և կրթութիւնք աւանդել, — և ի՞նչ հոգ նոցա, — նոյնպէս Հայն չկրնար դառնալ նոյնպիսի դպրոցի մէջ Հայութեան հարազատ գաղափար և գիտութիւնները։

Աստի Հայն՝ ի մանկութենէ կամ խակամիտ ժամանակէն սկսեալ Գերմանական կրթութեամբ և գիտութեամբք զարգանալով և միտքը բացուելով՝ ազգակի գերմանացած կլինի, և Հայու կերպարանքով Հայոց մէջ սողոսկելով՝ մի միայն օտարին կծառայէ ի վնաս մեր Ազգի*)։

Ըստ այսմ ուրեմն դաստիարակութիւն ստացող և օտար ոգւով պատուաստեալներէն ի՞նչ օգուտ և արդիւնք կարելի է ակն ունել, եթէ ոչ զայն՝ (թողումք յիշել օտարանալ միտքը, և ուրիշ ազգաց հետ ի մի ձուլուելոյ ջանքը), որ ի ներկայս մի քանի անգիր անմտացած խառ-վայրագութեանց և իրերակործան ջանքն հետզհետէ պիտի ընդհանրանայ՝ եթէ այժմէն պէտք եղած զգուշութիւնքն և աչալրջութիւնն ի գործ չդրուի։

(Նոյ––ջ–ն–յ–)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

(*) Ցաւալի է. զի ի սոցանէ ոմանք Հայոց դպրոցաց մէջ ևս ներգործել կջանին, և մեր դըպրոցաց մէջ կրթեալներէն մի քանի խակամիտ համբակները որսալով՝ իւրեանց գործիք կանեն.

Շատ չանեմ՝ սոյնպիսեաց դիմակները կպատառոտին և ժողովրդեան արդար ցասումը և փոխարինութիւնը կվայելեն.

# ԱԶԳԱՅԻՆ

## ԵՐՑԱԽՈՒ ՎԻՃԱԿԻ ՆՊԱՍՏՆ.

Գեր. Առաջնորդն Հայոց վիճակին Երցախու Տ. Սարգիս Արքեպիսկոպոս՝ ինչպէս որ գրաւոր խոստացած և անցեալ տարի գործնականը ևս կատարած էր, նկատելով ի ներկայս Ճեմարանի բազմակարօտ դրութիւնը և պէտքը՝ այս տարի կանխեց յանուն Ճեմարանի տարեկան մի հազար ռուբլի նպաստը ի վիճակային արդեանց յղել, որոյ համար մեր շնորհակալութիւնը հրապարակաւ կմատուցանեմք նորին Գերապատուութեան։

## ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՆԱՄԱՅՐ ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՈՒՑ ՏՓԽԻՍԱՑ.

Տփխեաց Կուսանաց վանուց բազմաշխատ և արդիւնաւոր Վանամայր՝ բարեպաշտ Մարկաւագուհի Գայիանէ Իշխան–Բէհբութեանց՝ ի 13-ն ամսոյս կնքելով իւր ազգաւոր կեանքը՝ ի յաջորդ աւուրն մարմինն ամփոփուած է ի շիրիմ։

Աստի ըստ սովորութեան ընտրութիւն լինելով՝ և ի տեղի հանգուցելոյն Վանամայր ընդունելով մայրապետ Մարկա–

ստացուհի Չոխփոխմէ Իշխան-Ըէգլեարէկեանց՝ վեհափառն Աւագնորդ Գեր. Տ. Մակար Արքազան Արքեպիսկոպոսն յատկապէս յայտարարած է առ Վեհ. Հայրապետ, որ և օրհնութեան Կոնդակաւ հաստատեց Նորընտիր Վանամօր պաշտօնը։

Արդ կյուսամք՝ զի Նորընտիր Վանամայր բարեպաշտուհի Մայրապետ Չոխփոխմէ Իշխան-Ըէգլեարէկեանց քաջ ճանաչելով իւր նուիրական նորընկալ պաշտօնը և զգալով սուրբ պարտաւորութիւնքը՝ ոչ միայն արժանաւոր յաջորդ և Վանամայր կհանդիսանայ, այլ և անխոնջ կհետևի կուսանաց մտաւոր և բարոյական առաւել գեղեցիկ և բարձր զարգացմանց և կրթութեանց, նոցա նուիրական պարտաւորութեանց մէջ կյաւելու դարձեալ վսեմ և սուրբ մի պաշտօն՝ այս է՝ Հայոց օրիորդաց դաստիարակութիւնը՝ իրեանց պաշտպանութեանց և կառավարութեանց ներքև օրիորդական դպրոցներ բանալով և արդիւնաւորելով ըստ փափաքանաց Վեհ. Հայրապետի, որով արդարև առաւել կնուիրագործեն իւրեանց անձնանուէր Ուխտը, աւելի նախանձելի գործք և օրինակ կարդիւնաւորեն, և ի փրկութիւն Ազգի և ի պայծառութիւն Եկեղեցւոյ մեծ արդիւնք և յիշատակ կըթողուն։

## Ի ՆՊԱՍՏ ՃԵՄԱՐԱՆԻ.

Բաւական մխիթարութեանց և քաջալերութեանց առիթ և թելադիր կհամարիմք՝ երբ կտեսնեմք՝ զի հարազատ որդիք Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի բարենախանձ եռանդեամբ և զգացմամբք ոգեորեալ՝ իւրեանց նուիրական կեդրոնը ինչպէս ոգւով չափ կսիրեն և կնախամեծարեն, նոյնպէս ամեն ժամանակ և պարագայի մէջ կզգան և կփութան իւրեանց պարտաւորութիւնքը՝ միանգամայն իրաւունքը կատարել, որով ամբողջ ազգային մարմնոյ վերայ գրկապինդ ներդաշնակութիւն տիրելով և յարաթուն փոխադարձ աջակցութիւնք և գործակցութիւնք հսկելով և յարատևելով՝ գրեթէ հրաշալիքներ կարդիւնաւորուին և անշուշտ պիտի արդիւնաւորուին ամեն ատեն և ամեն տեսակ դիպուածոց և գործոց մէջ։ Ապացոյց չէ՞ և այն ընդհանուր վիշտ և եռանդուն ջանքն՝ զոր ողջամիտ Հայք՝ իսպառ արհամարհելով չարամիտ և դաւաճան ջանքերը և խլրտումները՝ շատ տեղ արդեամբք կարտայայտեն իւրեանց զգացումները՝ փութալով ի կարեկցութիւն և ի կամաւոր նուէրանս ի նպաստ վերաշինութեան այրեցեալ մասին Ճեմարանի Մայր Ս. Աթոռոյս, և հետզհետէ իրեանց օգնութիւնքը զանազան միջոցներով կհասցնեն ի Ս. Էջմիածին՝ ինչպէս որ արդէն ստացուած են Աստրախանէն, Գզլարէն, Մոզդոկէն, Գէորգևսկէն, Եկատարինոտարէն, Ղուբայէն, Երևանէն, Բագուէն ևլն։

Ժողովրդեան ի ներկայիս ունեցած վիճակը մեզ քաջայայտ լինելով՝ նորա նոյն իսկ դուզնաքեայ նուէրն և օժանդակութիւնն անգամ շատ յարգանաց արժանի է և մեծապէս և թանկագին նշանակութիւն ունի, որով արդարև Եկեղեցւոյ Գլուխն և կառավարիչն ևս մեծ խրախոյս կընդունի և առաւել ոգևորուած զուն կգործէ և կաշխատի։

Ուստի մեծապէս ուրախ և գոհ եմք տեսնելով ժողովրդեան այսպիսի հոկող և գործնական համակրութիւնքը և փոյթը, միանգամայն շնորհակալութեանց արժանի կդատիմք և այն անձինքը՝ որք այսպիսի հանգամանաց մէջ ժողովրդեան ոգևորող և յառաջընթաց կհանդիսանան՝ ինչպէս որ այս միջոցում են Աստրախանու վիճակին մէջ Բարեկրօն Յովսէփ Աւագ քահ. Բունիաթեանց և Մկրտում Գ. Սարգսեանց, ի Ղզլար Մեծ. Մարգար Գ. Մամաջանեանց և Սիմօն Խզմըրեանց, ի Ղուբա Բարեկր. Աւագ քահ. Ավշարեանց, ի Բագու Բարեկր. Թադէոս Աւագ քահ. Բուդաղեանց և Մեծ. Անդամք Խորհըրդարանի Մարդասիրական Ընկերութեան հանդիսացած են՝ և մեր խորին շնորհակալութեանց արժանացած, թողումք յիշել մասնաւոր անձինքը և նուիրաբերութիւնքը՝ որք ի ժամանակին պիտի հրատարակուին:

Այս առթիւ՝ արժան կհամարիմք Բագուայ Մարդաս. Ընկերութեան Խորհըրդարանէն առ Վեհ. Հայրապետ ուղղուած մի գրութենէն հետևեալ պարբերութիւնքը քաղել և հաղորդել ողջամիտ Ազգայնոց՝ ինչպէս ի Բագու՝ նոյնպէս ամեն տեղ հարազատ Հայորդւոյն վերայ՝ Ճեմարանի արկածին պատճառաւ տեսնուած տպաւորութեան և զգացմանց համար մի գաղափար տալոյ նպատակաւ:

Ահաւասիկ Խորհրդարանի գրածէն քաղուած պարբերութիւնն:

« Վեհափառ Տէր, երբ որ սուրբ Էջմիածնայ նորակառոյց Ճեմարանի կիսոյ մասին այրման լուրն հասաւ Բագու՝ Ընկերութեան Խորհրդական Անդամոց սրտից վերայ մեծ տպաւորութիւն եւ տրտմութիւն ներգործեց, բայց ունելով ի նկատի, որ մեր սիրելի ազգը այդպիսի տրտմալի դէպքերում ոչ մի ժամանակ չի մնացել եւ չի մնալ անտարբեր, նորա չըվհատեցան, այլ իսկոյն ստորագրութիւն բացեցին անդամոյս հաստատութեան մէջ եւ միջնորդութեամբ իւրեանցից ընտրած երկու Խորհրդական Անդամոց Գրիգոր Թումայեանցի եւ Գրիգոր Այվազեանցի, ժողովեցին, բաց ի Մարդասիրական Ընկերութիւնից ընծայած հարիւր ռուբլուց, երեք հարիւր տասն եւ չորս ռուբլի։ Վերոյիշեալ գումարը՝ որ ընդ ամենը 414 ռուբլի հանդերձ անուանական ցուցակաւ առաքելով ընդ սմին առ խմբագրութիւն Արարատ ամսագրոյ, Անդամք Խորհրդոյ ամենահպատակօրէն խնդրում են ընդունել այս փոքրիկ նուէրը ի նշան որդիական սիրոյ եւ զգացմանց՝ որ միշտ Հայկազեան տոհմը ունեցել է առ իւրեանց ազգասէր եւ բարեխնամ Հովուապետ »:

## Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՈՅ ԳԵՐԵԶՄԱՆ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հռչակաւոր Մենաստանն սրբոյն Ստաթէի առաքելոյ՝ որ ի Սիսական աշխարհի՝ դարաւոր ժամանակաց հետէ կարձանանայ Ազգային հնագոյն Պատմութիւն, իբրև կոթող մի պարծանաց. հընասէր արգոյ ճանապարհորդք թէ մեր Ազգայիններէն և թէ օտարներէն, երբ մուտ գործել են յայս աշխարհ Սիւնեաց բազմաթիւ և անհամար հընութեանց նուիրական նշխարացն պատկառելի և կարեկից այցելութիւն մի անել, ուր որ աչքերև կըբացուին այցելուաց առաջին երբեմն սխրալի հանդէս կրօնի և ճշմարիտ աստուածպաշտութեան և անուանելի արիական կորովութեանց դիւցազն նախնեաց մերոց Պայազատաց, և երբեմն տխուր տեսարան գործոց Պարսկական դրօշակի. բայց քանզամենն՝ պատուելի ճանապարհորդք հարկաւո,,